# ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԹԵՐԹԻԿ ՆԱԽԱԳԾԻ ՄԱՍԻՆ

Funded by the European Union

**EU4Energy. Կանաչ աճի հիմնադրամ (ԿԱՀ-GGF)**



**Իրականացման ժամանակահատված:** 01.01.2009 - 31.12.2030

**ԱլԳ երկրներ:**

Ադրբեջան, Հայաստան, Մոլդովա, Ուկրաինա, Վրաստան

**ԵՄ ներդրում:** € 13 350 000

**Ընդհանուր բյուջե:** € 13 350 000

**Իրականացնող կազմակերպություն(ներ):**

EIB, KfW

**Սոցիալական ցանցերում օգտահաշիվների հղումներ:**

https://twitter.com/GreenGrowthFund

**Նախագծի կայքէջ:** ggf.lu/

**Նախագծի նկարագրություն:**

Կանաչ աճի հիմնադրամը (ԿԿՀ–GGF) Եվրոպական միության աջակցությամբ գործող մասնագիտացված հիմնադրամ է, որը նախատեսված է հարևանության երկրներում էներգաարդյունավետության և ռեսուրսաարդյունավետության, ինչպես նաև վերականգնվող էներգիայի առաջխաղացման համար: Այն վերաֆինանսավորում է տրամադրում ֆինանսական հաստատություններին՝ այդ ոլորտներում իրենց ներգրավվածությունը բարձրացնելու համար, ինչպես նաև ուղղակի ներդրումներ է կատարում էներգաարդյունավետության և վերականգնվող էներգիայի նախագծերում: Այս ծրագիրը հիմնադրամի միջոցները հասանելի է դարձնում Հայաստանի, Ադրբեջանի, Վրաստանի, Մոլդովայի և Ուկրաինայի համար:

**Ակնկալվող արդյունքներ:**

- Դոնորային ֆինանսավորման ներգրավում՝ զարգացման բանկերի և մասնավոր հատվածի միջոցների մոբիլիզացման միջոցով.
- Փոքր և միջին ձեռնարկություններին (ՓՄՁ), տնային տնտեսություններին և համայնքային կառույցներին տեղական ֆինանսական հաստատությունների միջոցով կանոնավոր վերաֆինանսավորման տրամադրում՝ էներգաարդյունավետության և վերականգնվող էներգետիկայի ոլորտում ներդրումների համար.
- Կարողությունների զարգացման, խորհրդատվության և վերապատրաստման միջոցառումների իրականացում՝ դրանով իսկ աջակցելով վարկավորման գործառնությունների զարգացման և իրազեկվածության բարձրացման շարունակականությանը: